

ներդրողների պատկերասրահում է՝ ներդրումային որոշում կայացնելու խնդրում որակական և քանակական տվյալների պակասի կամ բացակայության պատճառով:

- ԲԲԸ-ները խուսափում են իրենց գործունեությանը վերաբերող տեղեկատվության բացահայտումից, քափանցիկ և հաշվետու գործելակերպից: Մասնավորապես չեն հրապարակվում գործունեության ֆինանսական արդյունքները: Ընկերությունները «փակ» համակարգ են ներդրողների համար, ինչն անկասկած վստահություն չի ներշնչում ընկերության և դրա գործունեության նկատմամբ: Փաստորեն, այդ «քողարկված» գործունեությունն էլ իր հերթին բացասական ազդեցություն ունի շուկայի զարգացման, վստահության մթնոլորտի ձևավորման գործում:
- Կառավարման ընթացքում բաժնետերերի իրավունքները ոտնահարվում են: Փոքր բաժնետերերը ոչ միայն զրկված է կառավարմանը մասնակցելու իր իրավունքից, այլև լիովին անտեսված է թողարկողի կողմից: Բաժնետերերի ընդհանուր ժողովները հրավիրվում են օրենքի կոպիտ խախտումներով. ժողովի օրակարգի, ընդունվող որոշումների և դրանց հնարավոր հետևանքների մասին տեղեկությունները որպես կանոն թերի են լինում:
- Շատ կարևոր խնդիր է մաև /եթե ոչ առաջնային/ կրթության պակասը: Կորպորատիվ մշակույթը գտնվում է դեռևս սաղմնային վիճակում: Այս խնդրի լուծմանն էր թերևս ուղղված օրերս ԳԱԱ առընթեր ստեղծված կորպորատիվ կառավարման դպրոցը. սա ցույց է տալիս, որ Հայաստանում բանկային համակարգի զարգացմանը և նոր բաժնետիրական ընկերությունների ստեղծմանը զուգընթաց աստիճանաբար մեծանում է կորպորատիվ կառավարման ոլորտի գիտելիքներին տիրապետող մասնագետների կարիքը:

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ ՄՈՏԵՑՈՒՄԸ


Յուրաքանչյուր լիզինգային կազմակերպության ռիսկերի գնահատման և կառավարման կոմպլեքս մոտեցումը կարելի է բաժանել երկու մակարդակի: Առաջին մակարդակը յուրաքանչյուր գործարքի ռիսկերի կառավարման գնահատումն է, երկրորդ մակարդակը լիզինգային կազմակերպության գործունեության հետ կապված ռիսկերն են (գծապատկեր 1):

Առաջին մակարդակում ուսումնասիրվում են կոնկրետ գործարքի ռիսկերը, մասնավորապես՝

Ռիսկերի առաջին խումբը սարքավորումների մատակարարներին վերաբերող ռիսկերն են: Հայաստանյան շուկայում այն համարվում է ուշադրության արժանի խնդիր, քանի որ այստեղ լիզինգային կազմակերպությունները մեծամասամբ աշխատում են արտասահմանյան մատակարարների հետ: Արտասահմանյան մատակարարների հետ աշխատելիս կարևոր է գրագետ կազմակերպել լիզինգային կազմակերպության առևտրային գործունեությունը:

Այժմեական խնդիրներից մեկը, որի առջև հայաստանյան լիզինգային կազմակերպությունները բազմիցս են կանգնել, այն է, որ մատակարարը չի կարողանում սահմանված ժամկետներում մերկայացնել լիզինգի առարկան և ուղարկել լիզինգային կազմակերպությանը, իսկ

մատակարարի հետ կնքված պայմանագրում ժամկետները նրանց համար բավարար սահմաններում հաստատելու և բանավոր պայմանավորվածություն ունենալու դեպքում մատակարարը ոչ մի պատիժ չի կրում ուշացման համար, կամ էլ տույժերը այնքան չնչին են, որ էական չեն լինում և չեն ծածկում լիզինգատուի ծախսերը: Վերջինս նվազեցնելու համար անհրաժեշտ է բանակցել և պարզել լիզինգի առարկան պատրաստելու և ուղարկելու ամենակարճ ժամկետները և կնքել պայմանագիր՝ հաշվի առնելով այդ ժամկետը: Միաժամանակ գումարի կորուստը ավելի կնվազեցվի, եթե մատակարարին տրված կանխավճարի մի մասը կամ ամբողջությամբ փոխհատուցի լիզինգատուն՝ լիզինգային կազմակերպությանը տալով կանխավճար:



Գծապատկեր 1. Լիզինգային կազմակերպության ռիսկերի գնահատման և կառավարման կոմպլեքս մոտեցում:

Գոյություն ունեն մեծ մատակարարների հետ աշխատանքի այլ յուրահատկություններ: Օրինակ՝ հայաստանյան շուկայի շատ սեզոնային ռիսկերի համար լիզինգային կազմակերպությունները «կամուրջ» են Արևելքի և ընդհանրապես արտաքին աշխարհի հետ: Բացի այդ լիզինգային կազմակերպությունները հաճախ մույն մատակարարի հետ աշխատում են մի քանի անգամ: Իրավիճակից ելնելով՝ լիզինգային կազմակերպությունները կարող են զեղչեր ստանալ մատակարար կազմակերպություններից (հիմնականում 5-10%, իսկ եթե սարքավորումը 10 տարուց ավելի հին արտադրության է և բարոյապես հնացած, զեղչերը կարող են հասնել մինչև 35-40%-ի¹):

Ռիսկերի երկրորդ խումբը կապված է լիզինգի առարկայի հետ: Լիզինգային կազմակերպությունը պետք է հասկանա, թե մա ինչպես է կարող կառավարել լիզինգի առարկայի

¹ Ястриб А.Г. Материалы конференции «Управление рисками». Группа МФК по развитию лизинга. М., 28 июля 2000г.

մնացորդային արժեքը և ինչքանով կարող է ծածկել կորուստները լիզինգային պայմանագրի դադարեցման դեպքում: Այստեղ նախ և առաջ պետք է հաշվի առնել լիզինգի առարկայի բարոյապես հնացած լինելը և լիզինգային կազմակերպության համար շատ կարևոր է կանխատեսել, թե որքանով է թանկ լիզինգի առարկան լիզինգատուի համար, և ինչքանով արագ այն բարոյապես կհնանա շուկայում: Դրա համար օգտագործվում է ռիսկի հասկացություն՝ կապված լիզինգի առարկայի արժեքի կորստի հետ:

Գնագոյացումը և գների փոփոխման միտումը նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել: Օրինակ՝ նորագույն տեխնոլոգիաների ոլորտը կտրուկ զարգանում է, և այն սարքավորումը, որը արժե 12.000-15.000\$, կարող է մեկ տարվա մեջ գնի անկում ունենալ մինչև 8.500-9.000\$, և լիզինգատուն, որը արդեն մեկ տարի օգտագործել է լիզինգի առարկան, կանգնում է ընտրության առջև՝ շարունակել կատարել լիզինգի վճարումները և օգտագործել արդեն մեկ տարի օգտագործված սարքավորումը, թե՞ դադարեցնել լիզինգի պայմանագիրը, վերադարձնել լիզինգի առարկան և շուկայից գնել գրեթե նույն գնով նորը¹:

Ռիսկերի երրորդ խումբը կապված է լիզինգատուի վճարունակության կորստի հետ: Այդ ռիսկերը կարելի է բաժանել երկու խմբի.

1. Արտաքին ռիսկեր

- փոփոխություններ օրենքներում,
- ադմինիստրատիվ ռիսկեր, որոնք խոչընդոտում են լիզինգատուին կատարել իր պարտավորությունները,
- հարկային աշխատակիցների կամ ընդհանրապես պետական մարմինների խոչընդոտումը աշխատանքին,
- հարկային դաշտի անկատար վիճակը,
- քաղաքական և սոցիալական վիճակը,
- շուկայում լիզինգատուի մրցունակությունը,
- ֆորս-մաժորային իրավիճակները:

2. Ներքին ռիսկեր

- լիզինգատուի անվճարունակությունը,
- կազմակերպության կառավարման որակը,
- լիզինգատուի աշխատակիցների որակավորումը,
- իրականացումը միտումնավոր գործողությունների՝ ուղղված լիզինգային պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելուն:

Երկրորդ մակարդակը լիզինգային կազմակերպության գործունեությանը վերաբերող ռիսկերն են:

Նախ և առաջ այդ տիպի ռիսկերը կապված են լիզինգային կազմակերպության պորտֆելի կազմման հետ: Ունիվերսալ լիզինգային կազմակերպության դեպքում, երբ այն զբաղվում է ֆինանսական լիզինգով, պայմանագրերի պորտֆելի ռիսկերը մինիմալ են, քանի որ լիզինգային կազմակերպությունը պայմանագրերը դասում է ըստ ոլորտների, և եթե մի ոլորտը ինչ-որ տնտեսական կամ այլ պատճառով դառնա ոչ եկամտաբեր, կազմակերպությունը շահում է մեկ այլ ոլորտում: Այնպիսի կազմակերպություններում, որոնք նեղ մասնագիտական լիզինգ են տրամադրում, այսինքն՝ աշխատում են միայն մեկ ոլորտում (օրինակ՝ Հայաստանում գործող «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ-ն) պորտֆելային ռիսկերը կազմակերպության համար ավելի մեծ վտանգ են ներկայացնում:

Հարկավոր է նաև հաշվի առնել լիզինգային կազմակերպության ֆինանսավորման աղբյուրի հետ կապված ռիսկերը:

¹ Масленников О.А. Материалы конференции «Управление рисками». Группа МФК по развитию лизинга. М., 28 июля 2000г.

Վերը շարադրված ռիսկերը մինիմիզացնելու համար առաջարկում են օգտագործել հետևյալ մեխանիզմները՝

1. Կանխավճարի կամ գրավի պահանջ լիզինգատուից: Լիզինգատուի վճարունակության մասին հստակ ինֆորմացիայի բացակայության դեպքում կանխավճարի կամ գրավի պահանջը արդյունավետ միջոց է: Որպես օրենք կանխավճարը կազմում է սարքավորման արժեքի 20%-ը: Լիզինգային վճարումները ժամանակին կատարելու համար լիզինգատուի կողմից սահմանվում են վճարումները ժամանակին չկատարելու տույժեր, օրինակ՝ 0.15-0.5% ուշացման յուրաքանչյուր օրվա համար, սակայն կան նաև բացառություններ: Օրինակ՝ «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ-ն նպատակահարմար է գտել տույժեր չսահմանել ուշացումների համար:

2. Բանկերի ածանցյալ լիզինգային կազմակերպությունների մոտ ռիսկերի մինիմիզացման մեջ լայն կիրառություն ունի պահանջը, ըստ որի լիզինգատուն իր բանկային հաշիվները բացում և վարում է տվյալ բանկում: Վճարումների ուշացման կամ չկատարման դեպքում լիզինգային ընկերությունը բանկի միջոցով կարող է սառեցնել լիզինգատուի բանկային հաշիվները:

3. Ռիսկը կարելի է նաև նվազեցնել մոնիտորինգի և վերահսկողության միջոցով: Որոշ բանկեր, որոնք լիզինգային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեն նշանակալից մասնակցություն, պահանջում են, որպեսզի լիզինգային պայմանագրերը ուսումնասիրվեն նաև բանկի վարկային բաժնի կողմից:

4. Պետական երաշխիքների միջոցով լիզինգատուի ռիսկերի մինիմիզացիա: Օրինակ՝ Հայաստանում տնտեսության և արդյունաբերության տարբեր ճյուղեր զարգացնելու համար այդ մեթոդը կարող է կիրառվել: Այսօր պետությունը որոշ հիմնադրամների, ՓՄՉ զարգացմանն ուղղված հաստատությունների աջակցությամբ որոշ բանկերի տրամադրում է երաշխիքներ: Դեռևս 2003 թվականին ԱՄՆ ԳԴ Մարքեթինգի աջակցության ծրագիրը երաշխավորել է «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼՎԿ» ՍՊԸ-ն իր ծրագրով իրականացվող որոշ լիզինգատուների պարտավորությունների կատարումը:

5. Լիզինգային պայմանագրի ապահովագրումը, ինչպես նաև ֆինանսական ռիսկերի ապահովագրությունը կարող են զգալիորեն նվազեցնել լիզինգատուի ռիսկերը, սակայն Հայաստանում լիզինգային պայմանագրերի ապահովագրությունը դեռևս զարգացած չէ և չի կիրառվում:

Լիզինգային գործարքների ժամանակ հանդիպող ռիսկերը կարող են բերել զգալի ֆինանսական կորուստների և՛ լիզինգատուի, և՛ լիզինգատուի մոտ: Ռիսկերի մինիմիզացիայի, այսինքն՝ նրանց վրա ներգործության ամենահաճախակի օգտագործվող մեթոդը ռիսկերի ապահովագրումն է:

Ճիշտ է, ոչ բոլոր ռիսկերն է հնարավոր ապահովագրել: Օրինակ՝ սարքավորման ճշգրիտ ընտրության հետ կապված ռիսկերը մինիմիզացնելու համար հարկավոր է բանակցել արտադրող կազմակերպության հետ, սահմանել լիզինգատուին անհրաժեշտ սարքավորումները և նրա համար ստեղծել ազատ ընտրության պայմաններ: Այսինքն՝ տվյալ տիպի ռիսկը ենթակա չէ ապահովագրման:

Եվրոպայում և ԱՄՆ-ում հաճախ է հանդիպում նաև լիզինգային կազմակերպության ղեկավարների կողմից կատարված անգիտակից սխալների ապահովագրություն: Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում տվյալ ծառայությունը նոր է ի հայտ գալիս: Մասնավորապես առաջինը այդպիսի ապահովագրական ծառայություն սկսել է մատուցել ռուսական «ВСК» խոշոր ապահովագրական կազմակերպությունը, որը 2006 թվականին «Эксперт» հանրահայտ կազմակերպության կողմից ներկայացվել է որպես անշարժ գույքի լավագույն ապահովագրող: Ըստ կազմակերպության՝ լիզինգային կազմակերպությունների հետ աշխատող բաժնի ղեկավար Մարգարիտա Գուցակայի, այդ տիպի ռիսկերի ապահովագրումը ակտուալ է ոչ միայն լիզինգային կազմակերպության ղեկավարների, այլ նաև տնտեսական ոլորտում աշխատող

բոլոր ղեկավարների համար¹:

Ընդհանուր առմամբ այդպիսի ռիսկերի ապահովագրությունը Ռուսաստանում գտնվում է կազմավորման փուլում: Ապահովագրական ընկերությունները պատրաստում են իրենց առաջարկները՝ հաշվի առնելով միջազգային փորձը: Հայաստանում տվյալ տիպի ռիսկերի ապահովագրական ծառայություններ դեռևս չեն տրամադրվում: Պատճառը, կարծում ենք, պահանջարկի բացակայությունն է:

Ֆինանսական ռիսկերի ապահովագրությունը գտնվում է զարգացման փուլում: Ֆինանսական ռիսկերի շարքին է դասվում նաև հիմնական միջոցների, օրինակ՝ լիզինգի առարկայի կորստի կամ վնասվածքի պատճառով գործունեության դադարեցումը: Դժվարությամբ է իրականացվում լիզինգային վճարումների չկատարման ռիսկի ապահովագրությունը, ապահովագրական ընկերությունները վերապահումով են մոտենում տվյալ տիպի ապահովագրությանը: «BCK» ընկերությունը ապահովագրում է լիզինգային վճարումների չկատարման ռիսկը միայն լիզինգի առարկայի կորստի կամ հաճախորդ կազմակերպության լուծարման դեպքում:

Ապահովագրման միջոցով ռիսկերի մինիմիզացիան տարածված մեթոդ է ամբողջ աշխարհում, սակայն նույնիսկ որոշ ռիսկերի ապահովագրման ժամանակ այն զգալի թանկացնում է նախագիծը և ավելի քիչ գրավիչ է լիզինգատուների համար: Օրինակ՝ ֆինանսական ռիսկերի ապահովագրման ժամանակ ռիսկերը զգալիորեն կրճատվում են, սակայն լիզինգային վճարումները մեծանում են, և կտրուկ կրճատվում է նաև լիզինգային կազմակերպության հաճախորդների քանակը:

Լիզինգային կազմակերպությունները առնչվում են նաև վարկային ռիսկի հետ: Վարկային ռիսկը փոխառուի գծով ռիսկն է, որը չի կարողանում մարել կամ կատարել իր պայմանագրային պարտավորությունը, և որի արդյունքում բանկը (լիզինգային կազմակերպությունը) ֆինանսական կորուստներ է կրում: Վարկային ռիսկը բոլոր երկրների բանկերում առկա խնդիրների հիմնական աղբյուրն է, ուստի բանկերի, վարկային/լիզինգային կազմակերպությունների համար կարևոր է հստակ պատկերացնել վարկային ռիսկը ճանաչելու, չափորոշելու, հսկելու և կառավարելու անհրաժեշտությունը: Անհրաժեշտ է, որ բանկերը կառավարեն ամբողջ պորտֆելի վարկային ռիսկը՝ առանձին վարկերի կամ գործառնությունների գծով՝ առկա ռիսկերի հետ միաժամանակ: Վարկային ռիսկի կառավարումը ռիսկի կառավարման համակողմանի մոտեցման կարևորագույն բաղադրիչներից է և էական նշանակություն ունի ցանկացած բանկի երկարաժամկետ հաջողության համար:

Կենտրոնական բանկը բանկերի, վարկային/լիզինգային կազմակերպությունների համար սահմանել է վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույց²: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանկային վերահսկողության դեպարտամենտը ստուգումներ իրականացնելու ընթացքում բանկերի (լիզինգային/վարկային կազմակերպությունների) վարկային ռիսկի գնահատման ժամանակ առաջնորդվում է սույն մեթոդական ուղեցույցով և/կամ բանկի վարկային ռիսկի կառավարման ներքին կանոնակարգով: ՀՀ Կենտրոնական բանկի դիրքորոշմամբ ներքոհիշյալ սկզբունքները և ընթացակարգերը պետք է հաստատվեն և գործնականում կիրառվեն հայկական բանկերի կողմից՝

Ա. վարկավորման խելամիտ գործընթաց,

Բ. վարկային փաստաթղթերի փաթեթի ստանդարտներ,

Գ. վարկերի մոնիտորինգ և վերահսկման ընթացակարգեր,

Դ. վարկերի մարման գործընթաց,

Ե. առանձին վարկերի գնահատում:

¹ Маргарита Гудаева, статья в журнале "Лизинг Ревю", 25.07.2007г.

² ՀՀ ԿԲ խորհրդի արձանագրային որոշում, 25 դեկտեմբեր, 2001 թվականի, թիվ 30, «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույց»: